

ցեալ գնայր: Եւ գնացեալ յեզր քաղաքին, որ է հանգէպ ծովակին ի կողմս արեւմտեան հիւսիսային որ ասի էյոււպոուլթան, զոր անդ կայ իւրեանց տեղի ուխտից, անդ եւս գտանէ զմի ոմն որ խմէ մուխ, եւ զնա եւս անդ սպաննէ եւ արկանէ ի ծովն, քանզի եէնկիւնէրի ասին գոյ: Այս էր ջան թագաւորիս մեր վասն միսին յոյժ յոյժ, բայց կեսառոսքն և իշխանքն ոչինչ փոյթ առնէին վասն այսմ կամաց թագաւորին, քանզի նա ոչ ելանէր հանապազ որ սաստկացուցանէր, այլ երբեմն երբեմն ելանէր, եւ վասն այնորիկ ոչ ելանէր ի գլուխ. եւ յորժամ տեսանէր զայն՝ յոյժ տագնապէր¹⁾: Եւ հրամայեաց զի մունետիկն յամենայն քաղաքս աղաղակեսցէ՝ Վա՛յ լինիցի այնմ մարգոյ որ ի ձեռս ունիցի զնա եւ կամ արբցէ եւ կամ ծախեսցէ ի չուկայսն:

Ուրբաթի (24 Յուլիս) մէջ գիշերոյս, որում լուսանայր Շաբաթն, եղև որոտ սաստիկ և կայծակմունք եւ օդոց խառնակմունք զԲ ժամս եւ առ հասարակ դրդեցաւ քաղաքս ամենայն եւ լացին զմեծ ժամս մինչեւ էանց սակաւ:

Կիրակի (26 Յուլիս). զնոր չուխայն տվաւ Մղտեսին եւ ընդ Մղտոսի Տիւրակին գնացաք ի հարսանիսն Կիւլազգի որդւոյ անդ ի Սուրբ Գէորք: Եւ Բշի (27 Յուլիս) ևս անդ կացեալ մեծաւ պատվով առ տան տիրացու Գրիգորին փեսից նոցին եւ երեկոյին եկաք: Եւ օրս (Մարտիրոս վարդապետն) իշխանութիւն ետ Ղազար վարդապետին եւ երեկոյիս քարոզ ասաց նա, և Դշի (29 Յուլիս) ել գնաց ինքն յԱստուածածին:

Ուրբաթ (31 Յուլիս). Զիլգատէ ասի ըստ բառի տաճկի լուսնոյս: Եաղուպի տէգկեհատարն²⁾ նստաւ նոր: Օրս էսքէրի տղան եւ թըլթըլն ընդ պետն իմ

1) տագնապէր. 2) տղկտրն.